

ՍԱՍՎԵԼ ՄԵԼԻՔՅԱՆ

Հայաստանում Ֆրանսիական համալսարան հիմնադրամի
մագիստրոս, ՀՀ կենտրոնական բանկի իրավաբանական
վարչության աշխատակից



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՍԱԿԱՐԳՈՒՄ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ¹ ՍԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ
ԱՆՁԱԿԱՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ
ՊԱՏԱԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԻՄԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

Ընկերությունը պարտավոր է պատախանատվություն ստանձնել իր պարտավորությունների դիմաց և բավարել իրեն ներկայացված օրինական պահանջները: Ընկերության մասնակիցները (քաժնետերեր) (այսուհետ՝ մասնակից), որոնք ձեռք են բերում մասնակցություն ընկերությունում, գիտակցում են այն դիմումը, որ եթե ընկերությունը ճանաչվի պատախանատու, իրենք կարող են կորցնել իրենց ներդրումները կամ դրանց մի մասը: Ամեն դեպքում ընկերությունն իրավունքի ինքնուրույն սուրյեկտ է, որը պատախանատու է միայն իր պարտավորությունների համար:

Նախադեպային իրավունքի համակարգի որոշ երկրների դատարանների կողմից մշակվել և կիրառվում են սահմանափակ պատախանատվության սկզբունքի մի խումբ դատավարական քացառություններ: Այս քացառությունները բույլ են տալիս «մի կողմ դմել» իրավաբանական անձի ինքնուրույնությունը², և պատախանատվության ենթարկել մասնակիցներին, որոնք օգտագործում են ընկերությունն իրենց պայմանագրային կամ օրենսդրական պարտականությունների կատարումից խուսափելու նպատակով:

Չնայած ընկալման համար այս սկզբունքը բավականին պարզ է, սակայն ամենափորձառու իրավաբաններն անգամ քացահայտում են, որ գտնվում են անորոշության մղձավանջում: Բազմաթիվ հեղինակներ տարբեր ժամանակաշրջաններում նշել են, որ դժվարանում են որևէ ուղղորդող «գիծ» գտնել բազմաթիվ դատարանների կողմից ստեղծված նախադեպային լարդինքուսում, քանի որ կայացված որոշումները հաճախ հիմնված են ոչ թե իրավունքի նորմերի, այլ արդարության և կարեկցանքի սկզբունքների վրա:

Ինչպես աշխարհի բոլոր երկրներում Հա-

յաստանում ևս իրավաբանական անձը կարող է օգտագործվել ոչ իրավաչափ նպատակներ կենսագործելու դրդումներով: Նշված խնդրի լուծման և ընկերության մասնակիցներին անձնական գույքային պատախանատվության ենթարկելու համար անհրաժեշտություն է առաջանալու ուսումնասիրել միջազգային համապատասխան փորձը: Նշված երևոյն առավել խորն ընկալելու նպատակով սույն հետազոտության շրջանակներում պատրաստվում ենք ուսումնասիրել տարբեր երկրների, մասնակիրապես՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների և Կանադայի (Քվեբեքի) փորձը: Նշված երկու համակարգերի ընտրությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ վերջիններս զարգացման քարձը մակարդակ, կայացած իրավական համակարգ և ավանդույթներ ունեցող երկրներ են, և միաժամանակ հանդիսանում են 2 հիմնական ժամանակակից իրավական համակարգերի՝ մայրածագային և անզոսաքսոնական իրավական ընտանիքների ներկայացուցիչներ³:

Ամերիկայի Միացյալ Նահանգներում, 20-րդ դարի 30-ական թվականներից սկսած, առկա է ընկերության մասնակիցներին անձնական գույքային պատախանատվության վերաբերյալ դատական նախադեպերի հսկայական շտեմարան: Դատական նախադեպերի վերլուծության արդյունքում ակնհայտ է դառնում, որ ամերիկյան դատարանները անձնական գույքային պատախանատվության ենթարկելու համար անպայման պահանջում են ներքոհիշյալ քննարկվող 2 կամ ավելի չափանիշների առկայությունը:

Դրանցից առաջինը «Խառնված գործառույթների» չափանիշն է: առնված գործառույթների մասին կարող ենք խոսել այն դեպքերում, երբ ընկերության և նրա սեփականատերերի գործա-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ուոյքները միախառնված են, և հաճախ դժվար է վերջիններիս միջև տարբերակում մտցնել: Դուստր և մայր ընկերությունների համատեքստում գործերի միախառնվածության արդյունքում հաճախ դուստր ընկերությունը չի ունենում սեփական գործունեության ծրագիր, քանի որ նրա բոլոր գործողությունները բելազրպում և վերահսկվում են մայր ընկերության կողմից:

Դատարաններն առավել հեշտությամբ են ընկերության մասնակիցներին անձնական գույքային պատասխանատվության ենթարկում այն ընկերություններում, որտեղ չեն պահպանվում կրոպորատիվ ձևականությունները: Նման ձևականությունների օրինակ են արժեթղթերի բողարկումը, ընկերության դեկավարների ընտրությունը, վարկերի և այլ գործարքների փաստարդավորումը: Կորպորատիվ ձևականությունների չպահպանումը կարող է վկայել այն մասին, որ առկա է գործառույթների անբույլատրելի միախառնվածություն կամ ընկերության վերածումը «սոսկ գործիք»:

Ամերիկայի Սիացյալ Նահանգներում ընկերության մասնակիցներին անձնական գույքային պատասխանատվության ենթարկելու հիմք կարող է հանդիսանալ նաև «Կապիտալի աղեկվատության» չափանիշը: Ըստ պրոֆեսոր Բալենբայնի՝ «Եթե կապիտալը չնշին կամ անիրական է նախատեսվող գործունեության կամ կանխատեսվող կորստի ռիսկերի համեմատ, ապա դա կարող է հիմք հանդիսանալ ընկերությանն ինքնուրույն սուրյեկտի առավելությունից զրկելու համար»⁴:

Ընկերության մասնակիցներին անձնական գույքային պատասխանատվության ենթարկելու հարց է առաջանում նաև բոլոր այն դեպքերում, երբ դատարանը պարզում է, որ ընկերության գոյությունը պայմանավորված է քացառապես պայմանագրի կամ օրենքի շրջանցմամբ, կամ ընկերության օգտագործումը հետապնդում է խարդախություն իրականացնելու նպատակ:

Ամերիկայի Սիացյալ Նահանգներում ընկերության մասնակիցներին անձնական գույքային պատասխանատվության ենթարկելու համար կիրառվում է մասնակից չհանդիսացող պարտաւերերի օգտին մասնակիցների պահանջների սուրույնացիայի տեսությունը, որը կոչվում է նաև *Deep Rock* տեսություն⁵: Ընկերության սնանկության կամ լրտարման հանձնաժողովի գործունեության ժամանակ մասնակից չհանդիսացող պարտաւե-

րերը կարող են հիշատակել այս տեսությունը՝ պահանջելով դատարանից պարտադրել մասնակից-պարտաւերերին «անցնել հերթի վերջ»: Հերթի վերջում մասնակից-պարտաւերերը չեն ստանակամ կամ կատանան փոքր գումարներ, որի արդյունքում շահում են մասնակից չհանդիսացող պարտաւերերը, քանի որ առկա գումարը բաշխվում է ավելի քիչ անձանց միջև:

Այժմ խոսենք ընկերության մասնակիցներին անձնական պատասխանատվության ենթարկելու կանադական փորձի մասին: Կանադան ժառանգել է 2 իրավական համակարգ՝ մայրցամաքային համակարգը ֆրանսիացիներից և անգլոսաքսոնական համակարգը անգլիացիներից:

Կանադայի բոլոր նահանգների իրավական համակարգերը, քացառությամբ Քվերերի, հիմնված են անգլոսաքսոնական իրավունքի վրա: Քվերերն ի սկզբան եղել է ֆրանսիական գաղութ, որտեղ կիրառվել է մայրցամաքային իրավունքը: Քվերերի քաղաքացիական օրենսգիրքը նույնականացրել է իրավաբանական անձի ինքնուրույնությունը և որպես ընկերության մասնակիցներին անձնական գույքային պատասխանատվության ենթարկելու շարժառիթ է դիտարկում մանիպուլացիան և ընկերության ու նրա մասնակցի նույնականացման գաղափարը:

Անձնական գույքային պատասխանատվության ինստիտուտի կիրառման համար անհրաժեշտ է, որպեսզի ընկերության մասնակիցը մանիպուլացիայի ենթարկի իրավաբանական անձին և չարաշահի վերջինիս տնտեսական նպատակը՝ խարդախության, իրավունքի չարաշահման կամ հանրային կարգի խախտման նպատակով՝ միաժամանակ վնաս պատճառելով այլ անձանց և քացառելով իր անձնական պատասխանատվությունը⁶:

Մանիպուլացիան, որի արդյունքում կկիրառվի Քվերերի քաղաքացիական օրենսգրքի 371-րդ հոդվածը, կարող է իրականացվել երկու եղանակով: Առաջին դեպքում մասնակիցն օգտագործում է ընկերությունը՝ խարդախությունը, իրավունքի չարաշահումը կամ հանրային կարգի խախտման օրինականացնելու նպատակով: Այս դեպքում ընկերությունն օգտագործվում է որպես վարագույր՝ ծածկելու համար իր մասնակիցների արարքները և անձնական վարքագիծը:

Երկրորդ դեպքում մասնակիցն օգտագոր-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ծում է ընկերությանը որպես միջնորդ և նրա միջոցով իրականացնում խարդախություն, իրավունքի շարաշահում կամ հանրային կարգի խախտում՝ բնականաբար խուսափելով անձնական պատասխանատվությունից: Հարկավոր է նաև, որպեսզի գործողությունն իրականացված լինի առավելապես հօգուտ բաժնետիրոջ, այլ ոչ թե՝ ընկերության:

Հայկական օրենսդրությունը ևս պարունակում է անձնական գույքային պատասխանատվության կիրառման իրավական բազա, մասնավորապես՝ խառնված գործառույթների կամ ընկերության և սեփականատերերի միջև միախառնվածության (ընկերության մանիպուլյացիայի հետևանքով) շափանիշների համատեքստում կարող ենք նշել, որ ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը պարունակում է մի շարք դրույթներ, որոնք կարող են հիմք ծառայել Հայաստանում ընկերության մասնակիցներին անձնական գույքային պատասխանատվության ենթարկելու մեխանիզմի ներդրման համար: Մասնավորապես՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 50-րդ հոդվածի համաձայն՝ իրավաբանական անձն ունի առանձնացված գույք, իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով, կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող, բացի այդ պետք է ունենա ինքնուրույն հաշվեկշիռ:

Դրա հետ մեկտեղ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 60-րդ հոդվածը սահմանում է. «Իրավաբանական անձն իր պարտավորությունների համար պատասխանատու է իրեն պատկանող ամբողջ գույքով: Իրավաբանական անձի հիմնադիրը (մասնակիցը) պատասխանատու չէ իրավաբանական անձի, իսկ իրավաբանական անձը՝ իր հիմնադիրի (մասնակցի) պարտավորությունների համար, բացառությամբ սույն օրենսգրքով կամ իրավաբանական անձի կանոնադրությամբ նախատեսված դեսպերի»: Ակնհայտ է դառնում, որ իրավաբանական անձի պարտավորությունների համար նրա հիմնադիրների պատասխանատվությունը բացառություն է ընդհանուր կամոնից: Սակայն ՀՀ օրենսդրությունը սահմանել է այդ անձանց սուրսիդիար պատասխանատվության դեպքեր ևս:

Ավելին օրենքի 96-րդ հոդվածը ընկերության կողմից մամուլում որոշակի տեղեկություննե-

րի իրապարակման պարտականություն է սահմանում: Այս դրույթի շնորհիվ պահովվում է ընկերության գործունեության թափանցիկությանը մի մասը, որն էլ բացառում կամ նվազեցնում է որոշ չափով ընկերության և սեփականատերերի միջև միախառնվածության գոյացման հավանականությունը: «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքը ևս պարունակում է վերոհիշյալ դրույթներին համարժեք դրույթներ:

«Կորպորատիվ ձևականությունների չպահպանում» չափանիշի շրջանակներում պետք է նշել, որ ՀՀ օրենսդրությունը պարունակում է բազմաթիվ դրույթներ, որոնք պահանջում են այս կամ այն կորպորատիվ ձևականության առկայություն: Այս բնագավառում քաղաքացիական օրենսգիրքը բովանդակում է մի շարք ընդհանուր դրույթներ և պահանջներ, ինչպես օրինակ՝ «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածը, որում սահմանված է, որ իրավաբանական անձի հիմնադիր փաստաբությունը նրա հիմնադիրների հաստատած կանոնադրությունն է: Իրավաբանական անձի կանոնադրությամբ սահմանվում են իրավաբանական անձի անվանումը, նրա գտնվելու վայրը, իրավաբանական անձի կառավարման կարգը, ինչպես նաև պարունակում են համապատասխան տեսակի իրավաբանական անձանց համար օրենքով նախատեսված այլ տեղեկություններ: Կան նաև դրույթներ իրավաբանական անձի մարմինների ընտրության, նշանակման կարգի, անվանման և գտնվելու վայրի վերաբերյալ:

Ընկերության մասնակիցներին անձնական գույքային պատասխանատվության ենթարկելու բաղադրատարեր են պարունակում նաև յուրահատուկ կարգավորում ունեցող «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքը: Ինչպես «Բաժնետիրական ընկերությունների մասին», այնպես էլ «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքներում նախատեսված է ընկերության կողմից որոշակի տեղեկատվության իրապարակում: Բնականաբար բանկերի համար տեղեկատվության այդ ցանկը փոքր-ինչ յուրահատուկ է՝ ելնելով նրանց գործունեության առանձնահատկություններից: Մասնավորապես «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի համաձայն՝ բանկերը պարտավոր են հա-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

մացանցում՝ բանկի տնային էջում, մշտապես հրապարակել՝

ա) բանկի ֆինանսական հաշվետվորությունները և հաշվետվորությունների վերաբերյալ արտաքին առողջությունը եզրակացության պատճենը,

բ) օրենքով սահմանված ժամկետում՝ տարեկան ընդհանուր ժողովի գումարման մասին հայտարարությունը,

գ) շահութափաժինների վճարելու մասին որոշումների պատճենները, ինչպես նաև բանկի շահութափաժինների քաղաքականությունը սահմանող ակտերի պատճենները՝ առկայության դեպքում,

դ) բանկում նշանակալից մասնակցություն ունեցող մասնակիցների մասին տեղեկատվություն,

ե) բանկի խորհրդի, գործադիր մարմնի անդամների ցանկը և անձնական տվյալները:

Կորպորատիվ ձևականությունների պահանջները նույնպես բազմաթիվ են «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքում: Առաջին հերթին անդրադառնանը բանկի կանոնադրության նկատմամբ պահանջներին: Համաձայն վերը նշված օրենքի 20-րդ հոդվածի՝ կանոնադրությունը պետք է անպայման պարունակի՝ ա) բանկի լրիվ և կրծատ ֆիրմային անվանումը, բ) բանկի գտնվելու վայրը, գ) բանկի կազմակերպական-իրավական ձևը, դ) բաժնետիրական ընկերություն հանդիսացող բանկի համար՝ տեղաբաշխման ենթակա բաժնետոմսերի տեսակները (սովորական և արտոնյալ), բանակը և այլն:

Օրենքում հստակ ամրագրված են բանկի կառավարման մարմինների կազմավորման և գործունեության կարգը և իրավասությունները, բանկի դեկավարների պատասխանատվությունը:

Հայաստանում բանկերի կապիտալացման հարցերը կարգավորվում են ինչպես «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով, այնպես էլ ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով: Ավելի կոնևիտ օրենքի 44-րդ հոդվածը նշում է, որ ՀՀ կենտրոնական բանկը կարող է սահմանել բանկի կանոնադրական հիմնադրամի և ընդհանուր կապիտալի նվազագույն չափերը: Այսօր գործող և նոր ստեղծվող բանկերի կանոնադրական հիմնադրամը (կանոնադրական կապիտալը) պետք է լինի 50 մլն դրամ, իսկ ընդհանուր կապիտալը՝ 5 մլրդ դրամ:

«Պայմանագրի կամ օրենքի շրջանցում» և/կամ «Իմպերատիվ նորմի չկատարում» չափա-

նիշների հետ սերտորեն առնչվում են «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով ամրագրված պատասխանատվության միջոցները, որոնք կիրառվում են օրենսդրության խախտումների համար վերը նշված օրենքի 7-րդ գլխում ամրագրված սկզբունքներին և ընթացակարգերին համապատասխան:

Բացի այդ, ինչպես «Բաժնետիրական ընկերությունների մասին» և «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքներով, այնպես էլ «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով (հոդված 39-39⁶) նախատեսված են խոշոր գործարքների, շահագրգության առկայությամբ և բանկի հետ կապված անձանց հետ գործարքների կնքման համար հատուկ ընթացակարգեր և որոշ սահմանափակումներ: Այս դրույթները սերտորեն կապված են նաև «ակտիվների յուրացում» չափանիշի հետ:

Բանկի մանիպուլյացիայից խուսափելու նպատակով «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքը նախատեսում է, որ արգելվում է որևէ կերպ ներգործել բանկի դեկավարների վրա՝ նրանց պաշտոնեական պարտականությունների կատարման ընթացքում կամ միջամտել բանկի գործունեությանը՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Հատկանշական է, որ ՀՀ քրեական օրենսգրքի տնտեսական հանցագործություններ բաժնում տեղ գտած մի շարք հանցանքներ կարևոր նշանակություն ունեն մեր կողմից իրականացվող ուսումնասիրության համար: Ուշադրության է արժանի օրենսգրքի 178-րդ հոդվածը, որը վերաբերում է խարդախությանը և սահմանում է, որ խարդախություն է համարվում խարեւության կամ վստահությունը չարաշակելու եղանակով ուրիշի գույքի զգալի չափերով հափշտակությունը կամ ուրիշի գույքի նկատմամբ իրավունքի ձեռք բերումը:

Կարևորվում են նաև ՀՀ քրեական օրենսգրքի 193 և 194 հոդվածները, որոնք վերաբերում են կանխամտածված սնանկությանը և կեղծ սնանկությանը: Մասնավորապես՝ հոդված 193-ի համաձայն՝ կանխամտածված սնանկությունը պարտապանի հիմնադրիների (մասնակիցների) կամ նրան՝ կատարման համար պարտադիր ցուցումներ տալու կամ նրա որոշումները կանխարոշելու հնարավորություն ունեցող այլ անձանց, այդ թվում՝ պարտապանի դեկավարի, հավասարապես՝ նաև անհատ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ձեռնարկատիրոջ կողմից անվճարունակության հատկանիշների կանխամտածված ստեղծումը կամ դրանց չափի ավելացումն է՝ սեփական կամ այլ անձանց շահերից ելնելով, և եթե պարտապանին կամ պարտատերերին պատճառվել է խոշոր վնաս:

Քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածն էլ իր հերթին վերաբերում է յուրացնելուն կամ վատնելուն, այսինքն՝ հանցավորին վատակված ուրիշի գույքի զգալի շափերով հափշտակությանը:

Մինչ առաջարկի ներկայացումը, հարկ ենք համարում փորդինչ կանգ առնել՝ ամփոփելու Հայաստանում անձնական գույքային պատասխանատվության մեխանիզմի կիրառման փորձի արդյունքում ծագելիք պոտենցիալ խնդիրները: Խընդրահարույց կարելի է համարել անձնական գույքային պատասխանատվության մեխանիզմի կիրառման հետևյալ ասպեկտները և հետևանքները՝

- սահմանափակ պատասխանատվության
- անտեսում - հոգեբանական խնդիրներ,
- անհատների անձնական գույքի բռնագանձում,
- կիրառումը դատական մարմինների կողմից.
- նախադեպային իրավունքի մշակույթի և ավանդույթների բացակայություն,
- հակասություն գործող օրենսդրության հետ:

Հիմնվելով իրականացված միջազգային փորձի ուսումնասիրության վրա և հաշվի առնելով հայաստանյան իրադրության վերլուծությունը՝ հանգում ենք այն եզրակացությանը, որը նպատակահարմար չէ այս կամ այն մողելի անփոփոխ տարրերակի ներդրումը, քանի որ թե՛ ամերիկյան և թե՛ կանադական մողելը պարունակում են բաղադրատարեր, որոնք չափազանց բարդ են, կամ ասենք՝ ծայրահետ տեղայնացված, հաճախանքներ որոնք վերջիններիս ներդրումը Հայաստանում դարձնում են անհնար կամ անիրատեսական: Միևնույն ժամանակ, երկու երկրներում ձևավորված փորձը և առաջ քաշված լուծումները պարունակում են հայաստանյան իրավական համակարգի համար կենսական նշանակության տարրեր:

Հետևաբար, մենք առաջարկում ենք երկու մողելներից միահյուսված տարրերակ՝ «Հայկական մողելը», որը կիետիկ ամերիկյան և կանադական փորձին և անձնական գույքային պատասխա-

նատվության ենթարկելու հիմք հանդիսացող չափանիշները կամրագրի քաղաքացիական օրենսգրքում: Նշված չափանիշների հավաքագրման գործում կարևոր տեղ պետք է հատկացնել անկախության 15 տարիների ընթացքում կուտակված հայկական փորձին:

Ավելին, ամերիկյան փորձը պարունակում է մեր հետաքրքրությանն արժանացած մեկ այլ տեսություն ևս: Խոսքը Deep Rock տեսության մասին է, որը մի շարք չափանիշներով մոտ է անձնական գույքային պատասխանատվության ենթարկելու տեսությանը: Վերոհիշյալ տեսության կիրառման ցանկության հիմնական շարժառիթը «Բանկերի և վարկային կազմակերպությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածով նախատեսված դրույթն է: Մասնավորապես նշված հոդվածի համաձայն՝ լուծարային միջոցների հաշվին բանկի պարտավորությունները մարման երկրորդ հերթում են այն պարտատերերի պահանջները, որոնք բանկին վարկ, վոխսառություն են տրամադրել կամ բանկում ավանդ են ներդրել կամ բանկային հաշվին դրամական միջոցներ են մուտքագրել բանկում աղմինիստրացիա նշանակվելուց հետո⁷: Բացի այդ, Deep Rock տեսությունն առավել հեշտ է կիրառել, քանի որ այն առաջացնում է պակաս ծայրահետ հետևանքներ: Այն փաստը, որ քննարկվող 2 տեսությունների կիրառման չափանիշները միանման են, կիեշտացնի վերջիններիս միաժամանակյա ներդրումը Հայաստանի ֆինանսական համակարգում⁸:

Վերադառնալով կիրառման քննարկված խնդիրներին՝ հարկ է նշել, որ սահմանափակ պատասխանատվության անտեսումը, ինչպես ցույց է տալիս տասնյակ տարիների միջազգային փորձը, չի առաջարել որևէ շոշափելի բացասական հետևանք՝ կապված ընկերություններում ներդրումների կատարման ցանկության հետ, և կարծում ենք, որ Հայաստանը բացառություն չպետք է կազմի:

Դատական մարմինների կողմից անձնական գույքային պատասխանատվության ենթարկելու տեսության կիրառումը, իրոք, որոշակի աստիճանի դժվարություններ կարող է ստեղծել, այն պարզ պատճառով, որ Հայաստանում բացակայում են նախադեպային իրավունքի մշակույթը և ավանդույթները: Սակայն այս խնդիրը նույնպես անլուծելի չէ. Հայաստանի Հանրապետության

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

օրենսդիր մարմինն ընդունել է նոր դատական օրենսգիրը, որն արդեն իսկ նախատեսում է նախադեպային իրավունքի որոշ ինստիտուտների ներդրումը: Բացի այդ, Հայաստանում և նրա սահմաններից դուրս մասնագիտական վերապատրաստումները, ինչպես նաև փորձի փոխանակման հնարավոր այլ տարբերակները բազմաթիվ են: Ինչ վերաբերում է գործող օրենսդրության և մասնավորապես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի հետ հակասություններին, ապա վերջիններս մեխանիկորեն կվերանան «հայկական մոդելի» ընդունման պարագայում, քանի որ այն հիմնված է լինելու հենց քաղաքացիական օրենսդրության մեջ համապատասխան փոփոխությունների և նորամուծությունների վրա:

Ընդհանուր առմամբ, մեր ուսումնասիրության արդյունքում հանգել ենք հետևյալ դիտարկումների. անձնական գույքային պատասխանատվության ենթարկելու տեսությունը դատական պրակտիկայի արդյունք է, ծնունդ է առել նախադեպային իրավունքից և հիմնված է արդարության և կարելցանքի սկզբունքների վրա: Բախվում ենք սպառիչ, միանշանակ և միատեսակ չափանիշների բացակայության փաստին, սակայն օգտվում

հսկայական և երկարատև միջազգային փորձի առկայությունից: Հատկանշական է նաև, որ հիմնականում դատարանները միտված են պահպանելու սահմանափակ պատասխանատվության սկզբունքը և անձնական գույքային պատասխանատվությունը կիրառում են որպես պատասխանատվության բացառիկ միջոց:

Ներկայումս Հայաստանն ունի որոշակի օրենսդրական բազա, որը կարող է լրացնիչ հենարան ծառայել անձնական գույքային պատասխանատվության և Deep Rock տեսությունների ներդրման գործընթացում: Եզրափակելիս կուզենայինք մեկ անգամ ևս նշել, որ անձնական գույքային պատասխանատվության ենթարկելու տեսությունը, որն ուղղված է «փրական» սեփականատերի բացահայտելուն ու վերջիններիս պատասխանատվության ենթարկելուն, ի զորու է զավել համակարգային որոշ ռիսկեր: Ինչ վերաբերում է կիրառման բարդություններին, ապա մանրամասն ու քրտնաջան տեղայնացման և տեսությունը հայկական իրականության պահանջներին համապատասխանեցնելու պարագայում կրացառվեն անհաղթահարելի դժվարությունները:

¹ Տե՛ս Սույն հետազոտության մեջ ընկերություն ասելով՝ հասկանում ենք բաժնետիրական և սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններին:

² Տե՛ս Խճնուրյուն իրավաբանական անձի, այսինքն՝ սահմանափակ պատասխանատվության գաղափարն ամրագրված է նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 50-րդ հոդված):

³ Տե՛ս Հարկ է նշել սակայն, որ Քվերեքը մարուր մայրցամաքային համակարգի ներկայացնից չէ, քանի որ այն ենթարկվել է անգլոսաքսոնական ուժեղ ազդեցությունների:

⁴ Տե՛ս BALLANTINE H, *Ballantine on Corporations*, 1946, 303

⁵ Տե՛ս Տեսությունն այս անունը ստացել է Deep Rock Oil Company-ի շնորհիվ, մի դուստր ընկերություն, որը մասնակցում էր Taylor v. Standard Gas & Elec. Co. գործին:

⁶ Տե՛ս BALLANTINE H.W. «Separate Entity of Parent and Subsidiary Corporations», (1925) 14 Calif. L. Rev. 12, 19.

⁷ Տե՛ս Բացառությամբ պարտատիրոջ և ՀՀ Կենտրոնական բանկի միջև կնքված պայմանագրով սահմանված դեպքերի:

⁸ Տե՛ս Գլուխ 1, Բաժին 1, Ենթարկմին 1, §6: